ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.04.2022թ. N 197/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.04.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Շ.Առաքելյանը, Հ.Վանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ղարիբջանյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները: «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել է հրավերով նախատեսված հայտի ապահովումը:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնման հրավերի 8.11-րդ կետի՝ «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

2" ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

3. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.15 կետի «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին, տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբջանյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Հ.Վանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան